

ԱՅ. ՆԱԶԱՐԵԱՆՑԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ

ԳԵՂԻՐԴ ՔԱՆԱՆԵԱՆԻՆ

I

Իմ ազնիւ Հայրենակից:

Ահա մատուցանելով Ձեզ ի աեսութիւն մեր հրատարակելի
«Լապտեր Հայաստանի» սրագրի առաջարկութիւնը, քաղցր է
ինձ ասել Ձեզ, որ ես անչափ ուրախ եմ խորհրդակցութեամբ,
միարանութեամբ և թեւակցութեամբ ընդ Ձեզ յառաջ տանել
մեր հասարակաց Հայկական գործը, եւ ես կարծում եմ. ոչ, ա-
մենեւին աներկմիտ եմ, որ ոչինչ աւելի ամուր բարոյական
կապ և բարեկամական դաշնաւորութիւն չկայ մարդերի, իբրեւ
բանաւոր և բարոյական էակների, ևս առաւել հայրենակիցների
մէջ, քանի թէ այն, որ հիմնուած է մի առաքինազործ միարան
ձեռնարկութեամն վերայ ես մինչեւ այժմ աշխատած, քրտնած
և տապակուած եմ միայն, մեր ազգի մտաւոր և բարոյական
օգուաների համար. Սյդ փոքր է և շատ փոքր, և միշտ մնալու
է անյաջող, զոնեայ անտևողական, որովհետև մի հատիկ մարդ,
որչափ ես քանքարաշատ լինէր նա, անբաւական է տանել բո-
լոր ծանրութիւններին այնպիսի մի ձեռնարկութեամն, որպիսի
է հրատարակութիւնը մի արժանաւոր օրագրի. բայց միացեալ
և միարանեալ զօրութիւնքը, ընկերութեան ոյժը, որոյ մէջ
պարունակուած է և մարդուս մնացործութեան կարողութիւ-
նը, ինչպէս քաջ յայտնի է խոհականիդ, սովոր են հեշտացնել
ամենայն դժուարութիւնք, այն հնարաւոր կացուցանել այն
բանը, որ անհնարին է առանձնական անհատների:

Սրանից շատ բացայայտ և հասկանալի պիտի լինի Ձեզ,
թէ ես որպիսի աչքով նայում եմ մեր առաջարկած գործի վե-
րայ. Սպասաւորել իւր ազգին պարտական է ամենայն անձն.
Դուք, ես և ամենեքեան, որ կարող են իւրեանց ստացած
չնորհներով. միայն թէ, այն ժամանակ լի և կատարեալ չափով

հնարաւոր է արդիւնագործութիւնը, երբ ներգործում է ընկերութեան ոյժը և զօրութիւնը:

Խնդրեմ ուշադրութեամբ ընթեռնուլ իմ գրած առաջարկութիւնը և լցուցանել պակասորդքը, եթէ կը գտանէիք, Կարծեմ, բոլոր գլխաւոր նիւթերը եմ խնդրի, պարունակուած են այստեղ: Ես մտածում եմ, որ չուտով հարկաւոր էր յառաջ խաղացուցանել գործը. շատ չնորհակալ կը լինէի Զեղ, եթէ հոգարաձու լինէիք օրինակել տալու իմ զրչագիրը Զեր զիւսնի նոտարիոսի ձեռնով, իսկ ես յետոյ կը ստորագրէի և Դուք կ'ուղարկէիք նամակը Խնստիտուտի կնքով կնքելով:

Զեղ յարգող հայրենակից

Ս. ՆԱԶԱՐԵԱՆՑ

23 մայիս, 1868 թ.

Մոռկուա.

II

Թիֆլիս, 22 Հոկտ. 1869.

Իմ ազնիւ բարեկամ

Գէորգ Եղինան,

Ահա անցանում է երրորդ ամիսը, որ ես անջատուելով Զեղանից, ճանապարհ ընկայ դէպ ի Թիֆլիս: Թէ որպիսի նեղութեամբ և տառապանքով կատարուեցաւ իմ ուղևորութիւնս, ըստ միծի մասին ջրով և փոքրիկ մասամբ միայն ցամաքով, չկամիմ նկարագրել Զեղ. բաւական է միայն ասել Զեղ, որ բռն 21 օր տեսց մեր ճանապարհորդութիւնը: Այժմ Թիֆլիզումն եմք և որպիսի կացութեան մէջ, կամմը փոքր ի շատ է պատմել Զեղ և ցաւում եմ, որ իմ պատմութիւնը չէ լինելու Զեղ շատ միիթարական: Շատ բան հեռուից տեսած, պսպղուն և գրաւիչ է, բայց որ մօտից քըննում ես և չօշափում ես, ոսկի կարծեցածդ ստուգում է մի շատ հասարակ մետաղ: Այժմ, երբ արդէն արած է վճռական քայլափոխը, պիտի ասեմ Զեղ, որ ամենեին հաւան չեմ Թիֆլիզին: մի կանոնիրակեան թանգութիւն է այստեղ. բնակութիւն և ծառայք ուկով կշավում են այստեղ: Իմ օթեանս արժէ 800 ման. ծառայքս 200 ման., աարեկան վարձով: Թիֆլիզ, ինչպէս

Ձեզ յայտնի է, բաժանվում է հին և նոր մասը. ևս բնակում
եմ նորումը, որովհետև այդ տեղ միայն կարելի է գտնանել
փոքի ի շատէ յարմարաւոր և վայելուչ բնակութիւն, թող և
այլ յարմարութիւնքը, միտ դնելով օդի պատուականութեանը
և տեղին, որ շատ հեռի չէ Ներսիսեան հոգեսր ազգային դրա-
բոյից Փայտը շատ թանգ է. կեանքի պաշարնդէնք արժան,
բայց կերակուրքը համեղ միայն փորձառու տանտիկոջ պատ-
րաստութեամբ. բայց Թիֆլիզեան խոհակերների խառնափնդու-
րութեամբ, ամենեին անուտելի ինձ, Մրգեղէնը ու ուշեմ.
Միայն թէ ինչ որ ինձ համեղ էր իմ մանկութեանս օրերում,
այժմ դարձած է ինձ մի շատ հասարակ բան, Վաճառականու-
թիւնը շատ ծաղկած է այստեղ և Հայոց ձեռքում գրեթէ միայն.
մեր Հայերը ունին այստեղ մագաղիններ, որ իւրեանց փառա-
հեղութեամբ և շքեղութեամբ ոչ թէ պակաս չեն Մոսկուայի և
Պատերբուրգի փառաւոր մաղաղիններից, այլ և մի մասամբ գե-
րազանց ու առաւելի Մի բան իսկոյն զրաւում է այստեղ մար-
դուս ուշադրութիւնը. ճոխութիւնը և հարստութիւնը և տմար-
դի ագանութիւնը այս տեղի մարդերի. խիզ, պատիւ, կարեկ-
ցութիւն, ազնիւ զգացողութիւն, ոչինչ նմանապիսի բան չկայ
այստեղ. Ձեզ պիտոյ էր տեսանել, թէ ոմանք հարուստ Հայեր
որպիսի շքեղազարդ տուններ ունին այս տեղ, ոսկեզարդ կէս
մի ասիական և կէս մի եւրոպէական ճաշակաւոր փառահեղու-
թեամբ, կարասիքով և այն և այն: Միայն թէ աների փառա-
հեղութեանը համեմատ չէ փողոցների բարեկարգութիւնը, որ
ըստ մեծի անպիտան կերպով սալայատակած, առանց օրինաւոր
տրօտուարների—շատ տեղ դոքա չկան ևս—լի են ամենայն
տեսակ ասլականութեամբք և աւելածքով. քաղաքի լուսաւորու-
թիւնը գիշերով այնպէս պակասաւոր և չնչին, որ ման գալ
կարելի չէ, առանց վայր ընկնելու և ոտք ու զլուխ ջարդելու.
շատ մարդիկ և ընտանիք լապտերով են շըջում փողոցների մէջ
գիշերով. Մի խօսքով, սիրելի քաղաք չէ Թիֆլիզը և շատ ան-
յարմար նոցա, որ երկար ժամանակ կացած էին Ռուսաստանի
մայրաքաղաքներում. Զրօսանքի տեղ է միայն Գոլովինսկից
Պրօսպեկտը, ուր և գտանվում է փոխարքայի ապարանքը
բարձր տեղում, և նորա առաջն ծառազարդ ճեմելիք սալայա-
տակով սրբատաշ քարերից, մինչև բաւական տարածութիւն
գէպ ի վեր ձգուելով նոյնպէս ծառազարդ ճանապարհով, կայ
այս տեղ մի այլ զրօսարան, Ալեքսանդրեան այզի, որ բաւա-
կան վայելուչ և ընդարձակ է մի շատրուանով, որ խաղում է
կիւրակէ և հանդիսաւոր օրերում, ուր և մեծ բազմութիւն լի-
նում է:

Իմ տեսչութեանը յանձնած ուսումնարանը տակաւին շատ պակասաւոր դրութեան մէջ է. շնութիւնը և դասատունքը կեցառ և անկարգ: Վարժապետները լաւ մարդիկ են և աշխատում են ազգասիրական ջերմեանդութեամբ, բայց ստանում են փարբիկ վարձատրութիւն 50 մանէթ տարեկան դասին, որ շատ փոքր է Թիֆլիզի պէս թանգ տեղում: Ծխական ուսումնարանները, որ էին պատրաստողականքը դպրոցի համար, ամենեին բարձի թողի արած: Ուսումնական հնարները, դրոցական մատեանք և գիտնական հանդերձանք գրեթէ չկան ամենեին: Թէպէտ իմ առաջարկութեամբք և խթանմամբ ոտք ու ձեռքը հոգաբարձուների սկսած են շարժուել և արիանալ. բայց մեր յարակցութիւնքը դեռ ևս ստացած չեն այն բարեացակամական և յարգողական ուղղութիւնը, որ կարելի լինէր ինձ այժմ շատ պտղաբերութիւն յառաջացնել: Ես չկամէի լոկ վարձկան լինել, բայց նոքա, ինչպէս երևում է, չեն հասկանում այդ բանը և այդ պատճառով չկամին վերահասու լինել իմ նեղեալ կացութեանը և օգնել ինձ վասն իւրեանց յատուկ օգտին: Իմ առաջարկութեամբ և աշխատութեամբ հանդիսաւոր ակտ եղաւ այս տարի 12 Հոկտ. ուսումնարանում: մեծ բազմութիւն, հրաւիրուած էր ուսումնարանի զարդարած դահճի մէջ. ասուեցան ճառեր, իմ կողմից և համարատուական ճառ Հոգաբարձուներից մինի բերանով: Գուցէ յաջողուի ինձ հրատարակել այդ ճառերը, մի քանի այլ աշխատութեամբք վարժապետների, հանդերձ ինչ ինչ կարուոր տեղեկութեամբք ուսումնարանի վերայ, իրու մի երօնուր, որ արժանի էր ընթերցանութեան:

Մինչ այսօր ոչինչ արձակման թուղթ չեմ ստանում լազարեանց ուսումնարանի կառավարութիւնից: Դուք խոստացք շուտով ուղարկել ինձ իմ յաջողութեամբք մասնակուած ընդունուած առաջարկեալ այս առաջարկեալ ինչ ինչ կարուոր տեղեկութեամբք ուսումնարանի վերայ, իրու մի երօնուր, որ արժանի էր ընթերցանութեան:

Ի՞նչպէս լցուցիք Զեր ճանապարհորդութիւնը. որպէս է Զեր առողջութիւնը, առողջութիւնը Խրիստոֆոր Եակիմովիչի: Մենք ապրում ենք Թիֆլիզում, տակաւին մնանելով այն քաղցր բարեկամութեան յիշատակներով, որ բերած ենք մեր հետ Մոսկուայից: Այս Թիֆլիզի հետ շուտով ընտանենալ և ընտելանալ անկարելի է. տակաւին ամենայն բան օտար է մեզ, բնութիւնը և մարդիկը և այս տեղի կեցութեան կարգը: Մենք մեր բոլոր հոգեկան գոյութեամբ, մեծագոյն մասամբ պատկանում ենք Մոսկուային, ուր մեր կենդանի և հանդուցեալ սիրելիքն են: Այսպէս իմացիք:

Յուսով եմ, որ Դուք կը կամնայիք նամակագրութեամբ հազորդակից մալ իմ հետ, ինչպէս խօստացած էք: Ի՞նչ է առ նույն մեր սիրելի Փանևանցը, որ վաղուց թողած է զիս անպատճանի: Խնդրեմ իմ կողմից ողջունել թէ նրա, թէ մեր տէր Յարութիւնը և թէ մեր պատուական եղբայր Սիմեոնը (?) Սմականեան*) Շահազիգեանցը:

Ուզարկելով Ձեզ իմ առ ի սրտէ սիրոյ և յարգութեան ողջոյնը, մատ:

Զեր

Իմ հասցէս.

Ա. ՆԱԶԱՐԵԱՆՑԻ

Г. Инспектору Нерсесовскаго, армянск. Духовно-народнаго училища,

Въ Тифлисѣ

На углу Сергіевской и Садовой улицы, въ домѣ Григорья Шадинова.

III

Թիֆլիզ, 18 Նոյեմբ. 1870.

Մեծապատիւ բարեկամ,

Ձեր յարգելի նամակը ամսուա 4 թուականից հասաւ ինձ իւր ժամանակին, որոյ մէջ յայտնուամ էք ինձ ներկայ պայմանքը ոյն պրօֆեսորական պաշտօնի, որ ես ցանկանուամ էի վերստին յանձն առնուլ կազարեանց Խնսաբիտուատում: Արդարեւ, այս րոպէիս այդ պայմանքը (1200 ման. տարեկան ուոճիկ 16 շաբաթական ժամերով դասատուութեան, չեն ամեննեւին շահաւէտ ինձ—ես ստանուամ եմ իբրև տեսուչ Ներսիսեան դպրոցի 1700 ռուբրի և 400 ման. վասն դասատուութեան—սակայն վստահանող առ Ձեր բարեմտութիւնը առ իս և տեղի տալով Ձեր բարեկամական խորհրդակցութեանը և յուսադրութեանը, որ ժամանակով այդ պայմանքը կարող են և պիտի փոխուին դէպի ի լաւագոյնը և առաւել շահաւէտը ամենայն, մասամբ, թող առ հասարակ որ և իցէ արքունի պաշտօնի ապահովութիւնը և պատուատութիւնը, շտապուամ եմ այս նամակովս վճռողաբար

*) Ալդակէ է ձեռագլում:

Ե. Կ.

պատասխանել Զեզ, որ ևս յանձառու եմ գորան, Մնում է միան մի լուծանելի խնդիր, որոյ մասին ես մեծ մտատանջութեան մէջ եմ. այդ խնդիրը պատկանում է իմ տեղափոխութեան ծափքին, որ միտ դնելով իմ մատենադարանի և այլ տնտեսական անօթների ծանրութեանը, այսքան ահազին հեռաւոր ճանապարհի մէջ, հասանելու են, շատ փոքր հաշուելով՝ գոնեայ 600 ման. առանց իմ անձնական ճանապարհորդութեանու ես կարող էի որ և իցէ տնտեսութեամբ իմ ծափքերի մէջ իրագործել իմ ճանապարհորդութիւնս առանց ծանրութիւն տալու ինստիտուտի գանձատանը, բայց իմ գրեսակի և անտեսական անօթների ծանրութիւննքը տեղափոխելու համար դէպ ի Մոսկուս ստիպուած կը լինէի ծանրաբեռնել ինձ պարտքով, և այդպէս իմ տեղափոխութիւնս նստելու էր ինձ գրեթէ իմ մի տարու պրոֆեսսորական թոշակը. Ահա մի դժուարին խնդիր, որ առաջարկում եմ Զեր բարեմիտ, բարեկամական ուշազրութեանը և յանձնում եմ մեծաւորների մարդասիրութեամբ. Զեր նամակի մէջ ոչինչ ասած չկայ ճանապարհի ծափքի վրայ, որ միտ դնելով գոնեայ իմ ջրաւորութեանը այս բոպէիս, երկրորդական խնդիրներից չէ; Ես կամիմ յուսալ, որ Զեր բարեկամական հոգաբարձութեանը և բարեխօսութեանը առ պ. Հոգաբարձուն և առ Դիրեքտօրը պիտի յաջողուի լուծանել այդ խնդիրը, որով փոքր ի շատէ թեթևացնելու էիք իմ ծանր գրութիւնը, եւ ես լինելու էի Զեզ այս մասին յաւիտեան չնորհապարատ ես մտածում եմ, որ ինստիտուտի բարեմիտ մեծաւորքը յարգելով իմ այնքան ամեայ ջերմեռանդն և պտղաբեր պաշանատարութեանը կազարեանց ինստիտուտի մէջ, դժուարանալու չէին յանձն առնուլ այդպիսի մարդասիրական զոհաբերութիւն, որ արդարեն, եթէ ամենայն ինչ ձգէինք նեղսրտութեան հաշուի տակ, պիտոյ չէր լինելու, եթէ մի այլ խնդրակից նոյն պաշտօնին, Մոսկուայից կամ Պետերբուրգից հրաւէր ստանար յանձն առնլու իմ պաշտօնը:

Յայտնելով Զեզ արդէն իմ պատրաստականութիւնը և յօժարութիւնը վերստին յանձն առնլու պարսիկ և արաբական դպրութեան պրօֆեսսորական պաշտօնը ի վերայ հիման Զեր առաջարկած պայմաններին, այլ և յանձնելով Զեր բարեկամական հնարագէտ հոգաբարձութեանը թեթևացնել ինձ իմ տեղափոխութեան նիւթականապէս դժուարութիւնը, որչափ միայն կարելի էր Զեզ, միտ դնելով վերեռում ճառագրած իրողութիւններին, քաղցր է ինձ ամեն վստանութեամբ առ Զեր բա-

բեկամական պատրաստականութիւնը օգտակար և պիտանի լինելու ինձ:

Գրել զիս յառաջուց
Զեղ չնորհապարտ բարեկամ

Ա. ՆԱՁԱՐԵԱՆՑ

Խեղբեմ պ. էմինին մատուցանել իմ մեծաբողական ողջոյնս,

IV

Թիֆլիս, 23 Սեպտ. 1871 թ.

Մեծապատիւ խոհական բարեկամ
Գրիգոր Եղեան,

Իմ նամակս առ Զերդ սիրելութիւն, անցեալ յուլիսի 4
թուականից, անկորուստ ստացած կը վնիք և տեղեկացած, որ
ևս հոգով չափ յօժար էի գարձեալ տեղափոխութիւն զէալ ի Մոս-
կուա, նոյն պաշտօնի անուամբ, որ այդքան տարի Զեր բարե-
կամական Տեսչութեան ներքոյ լցուցած էի, միայն թէ, որ
շատ բնական էր մանաւանդ գերդաստանի հօրը, զինի այնքան
զրկանքի որ պատրաստած էր ինձ իմ աեղափոխութիւնս զէալ
ի Կովկաս և տնակարգութիւն Թիֆլիզի մէջ, ևս մանրամաս-
նաբար նկարագրեցի Զեր առաջն ի գիտութիւն պատուական
սիրելոյդ այն բոլոր գժուարութիւնքը, որ կարեորապէս
կապակից պիտի լինէին իմ վերստին տեղափոխութեանս
գէալ ի Մոսկուա և անտեղ նոր ի նորոյ տնային կարգա-
գրութեանս, Բայց ես կնքեցի իմ նամակս այն քաղցր յու-
սով և վստահութեամբ, որ Դուք գործ զնելով Զեր առ իս մար-
դասիրութիւնը և բարեացակամութիւնը, որ և է կերպով կը-
թեթեացնէիք իմ կնանքի արդարի ծանր և ծանր բեռնը:

Որովհետեւ այժմ, ինչպէս լուսւմ եմ, ինձ առաջարկած պրօ-
ֆեսսորական պաշտօնի պայմանքը, կարգադրութեամբ պարոն
նախարարի, Տօլմաջի, դէպի առաւել շահաւէաը փոխուած են,
շտապում եմ Զեղ տեղեկութիւն տալ, որ ես վճռապէս և որո-
շապէս պատրաստ եմ յանձն առնուլ այդ պրօֆեսսորական պաշ-
տօնը և յուսով եմ, որ ինստիտուարի մեծաւորքը, Դուք, իմ
պատուական պարոն և բարեմիտ Նիկոլայ Դաւիթովիչ Դելեա-
նովը միտ զնելով իմ ծանր դրկանքին և բարեկամական կա-
րեկցութեամբ առ իմ չքաւորութիւնը—որովհետև Թիֆլիզը կա-

բող է միայն չքաւոր առնել մարդ և այդ տեղ մի քանի 1000 մասէթ այս ահազին թանգութեան մէջ ոչինչ են, — ևս յուսով եմ, որ իմ տեղափոխութիւնը Դուք, որքան ներում են Զեր կարողութեան հսարքը կը թեթեացնէք ինձ, զիս յաւիսեան շնորհապարտ կայուցանելով Զեր սիրելութեանը:

Ես ամենեին սխալուեցայ, յղանալով անգամ այն խորհուրդը, թէ կարելի էր որ և իցէ օգտակար զործ յառաջ տանել կովկասի մէջ, մեր սիրելի ասիամիտ Հայերի հետ, յանուն ազգային դաստիարակութեան և լուսաւորութեանո Ես սխալուեցայ յանձն առնլով այդպիսի, ահազին զրկանքով լի տեղափոխութիւն կենացութիւն այնպիսի մարդկան, որ ինքեւնք լինելով իւրեանց թշնամիք, ամենեին տգէտ և անփոյթ ժամանակի յառաջաշարժ ընթացքին (պրօգրեսին) ամենայն քայլափոխում և զիս կալ և կապ կաշկանդելով, ոչնչացնում են իմ բոլոր ոյժը և զօրութիւնը, այնպէս որ սփափուած եմ գոտանութեամբ առ Զեր ազնուամտութիւնը, ասել Զեղ, թէ Ես խաղալիք եմ գարձած այս անմիտների և անբարոյականների անմոռութեանը և անբարոյականութեանը Եւ այլապէս ես կարելի չէ մի հոգաբարձական ժողովի մէջ, ուր նստած է տաճներկուզիսանի վիշապ, մի գլխանի վիշապապետով Եւ սոցա ջանքը և փոյթը այն չէ, որ ազդի մանկունքը ժամանակի հետ յառաջ գնան, այլ վայր ի վերոյ, անկարգ ուսմամբ անմտանան միանգամայն իմ հայրենասիրութիւնը — ոհ, իմ հայրենասիրութիւնը, որով միայն մոլորուած և յափշտակուած ես ձգեցի իմ անձը այս խորխորատի մէջ — իմ հայրենասիրութիւնը ոչինչ է, ունայն է այսակը, որտինետեւ հանդիպում է մի անմիտ և թշնամական հայրենատեցութեան: Մի սարսափելի անմիտանութիւն, մի բժամիտ անհոգութիւն աիրապետած է այստեղ, ոչ մի իննդիր, ոչ մի առաջարկութիւն իմ կողմից, պատկանեալ ուսումնարանի թէ արտաքին և թէ ներքին բարեկարգութեանը, մինչն այժմ գտած չէ ուշադրութիւն. Վայր ի վերոյ շատախօսութիւն և վիճաբանութիւն և կորուստ ժամանակի շատ, բայց վճիռ որոշումն և գործակնարութիւն ոչ մի: Ոչինչ հաստատուն բան, որչափ վլուիք, այնչափ կարծիք. Հոգաբարձուների ժողովումը շատ անկանոն. Կրկուքը կան, չորքը պակաս են, չորքը կան, ութիւ պակաս են. և ատենապետը (պրեծենատել) զրեթէ միշտ բացակայ: Ահա Զեղ համառօտիւ, այս մեր հայկական ուսումնարանի կառավարութեան պատկերը, ողբակի պատկերը, և ես, անբաղդ քաղաքացիս եւրոպէական լուսաւոր հասարակութեան, ես, անբաղդ աշակերտս եւրոպէական գալոցի, ամենայն շաբաթ

ունիմ ականատես լինելու այս տմարդի խառապիկական անմիտ տեսարանիու:

Նախախնամութեան կամքն էր տալ ինձ և այս փորձը փորձել, առ ի ճոխացնելու իմ կենսական փորձերի գլուխը (կապիտալլ): Բայց արդէն sat est superquam! Հարկաւոր է ինձ մտածել փոքր ինչ շունչ առնուլ իմ ծանրաբեռնած ծերութեան օրերում և իմ մոսկովեան բարեկամների զրկում, և այդ քաղցր բարեկամներից մին էք և Դուք, իմ ազնիւ Քանանեան:

Այսուհետեւ չունիմ էջ աւելի աշխատ առնելու զգեղ. զրեցի և թափեցի Ձեր առաջն իմ ցաւած սիրտը. այսուհետեւ Ձեր ջանքեց և բարեկամական հոգաբարձութիւնից կախ է ճանապարհ յարդարել ինձ դէպ ի Մոսկուա, և դէպ ի մեր ազնիւ սիրելիքդ այդ տեղ:

Զեզ յարգող և սիրող

անձնուէր Ա. ՆԱԶԱՐԵԱՆՑ